We would like to thank all our visitors and supporters who have entered through the doors of 23.5, who have been ambassadors of the universal values 23.5 has brought awareness to, who have contributed to 23.5 becoming a site of dialogue, creation, sharing and reflection.

Always aware of the value of remembering, we look forward to solidarity, multiplying and building a future where co-existence, mutual understanding, democracy and peace prevail.

## Congress Advances Final FY23 NDAA

Continued from page 1

Biden Administration to send a group of U.S. observers to Armenia and for the Biden Administration to work with the European Union and the United Nations to secure a mandate for a peacekeeping force along the Armenia-Azerbaijan border as well as Artsakh-Azerbaijan border to help prevent another genocide.

The explanatory statement further reiterates that the “report on Azerbaijan” as contained in the FY22 NDAA “is already required” and that “the report was due 180 days after the date of enactment, but the Department of Defense has not yet submitted the report to the relevant congressional committees. The Department must deliver this report as soon as possible.”

In addition to calling out the Re-

ter, said in a video address to the local population. “That is why we are introducing a saving regime for all, including the government.”

Azerbaijan first disrupted the supply of natural gas to Karabakh on March 8, 2022 for 11 days ‘to fix damage to a pipeline’ pumping natural gas from Armenia to Nagorno-

public of Azerbaijan’s illegal activities and gross human rights violations, the annual defense bill indirectly addresses the Republic of Turkey’s persistent violations of the Republic of Greece’s internationally recognized airspace, as both members are members of the North Atlantic Treaty Organization (NATO). The FY23 NDAA “Declares that a NATO ally should not conduct unauthorized territorial overflights of another NATO ally’s airspace.”

“For the second consecutive year, Congress has called on Azerbaijan to release all Armenian POWs and civilians illegally held in captivity in its marquee annual U.S. defense policy bill,” stated ACA Board Chairman Sevak Khatchadorian. “The U.S. can and must hold the Aliyev regime accountable until all Armenian hostages held by the brutal dictator in Baku are released,” Khatchadorian said.

Karabakh on a section passing through Baku-controlled territory.

Gas supply was resumed on March 19, but again was interrupted on March 21 when Nagorno-Karabakh’s authorities accused Baku of having turned off the valve on the pipeline that the Azerbaijani side had installed during the repairs.

## Komitas Quartet Brings Armenian Classical Folk Music to Life



By Christine Aghakhanian

Over 300 concert-goers filled the Glendale Presbyterian Church on December 9, to hear the melodic classical Armenian folk music of Komitas, which was brought to life by the world-renowned Komitas Quartet.

Mistress of Ceremonies Nune Avetisyan introduced the dignitaries who were present at the performance organized by the Hi-Am Charity Foundation. In attendance was His Eminence Archbishop Hovnan Derderian, Primate of the Western Diocese of the Armenian Church of North America, State Senator Anthony Portantino and City of Glendale Mayor Ardashes Kassakhian.

Archbishop Derderian thanked the Komitas Quartet for continuing to enlighten the community with Komitas Vartabed's inspirational music during this very dark chapter in Armenian history and encouraged them to continue their plight of carrying out the musical culture of the Armenian nation, while remembering our brothers and sisters in Armenia. Senator Portantino and Mayor Kassakhian each presented proclamations to the Quartet thanking them for their important contributions to the world of classical music and enriching the Armenian

American community with Komitas' rich compositions.

Some of the pieces in the program included, "Shogher Jan," "Yerkinkn Ampela," "Garuna," "Haberban" and "Vagharshapat Dance." The Quartet also performed music by Handel, Mozart and Rachmaninov, in addition to Edvard Mirzoyan's "Quartet." Receiving a standing ovation, the Komitas Quartet enthusiastically played additional pieces during their encore performance to a delightfully surprised crowd of Komitas admirers.

The Komitas Quartet consists of violinists Edvard Tadevosyan, Syuzi Yeritsyan, violist Alexander Kosemyan and cellist Angela Sargsyan. Established in 1924, the Komitas Quartet was granted the title of State Quartet of Armenia in 1931 and has won several honors and accolades throughout the years. The current members of the Quartet, hailed by Aram Khatchaturian as the "jewel of the musical culture of Armenia," are third and fourth generation musicians.

The evening concluded with Nshan Ajemian, founder of the Hi-Am Charity Foundation, thanking the Quartet for their wonderful performance along with all the organizers, volunteers and attendees at the event who made the concert possible.

## Pashinyan Warns of Threat of Genocide

Continued from page 1

further materialize," PM Pashinyan said.

"Today we see consistent actions that further materialize the fears that Azerbaijan is really organizing and preparing genocide in Nagorno-Karabakh more. And in this regard, I must emphasize the provocations that are taking place, in particular, in the Lachin Corridor. Some try to parallel the Lachin Corridor with other existing communications in the region or communications that may be reactivated or built, but I must emphasize that the Lachin Corridor is a genocide prevention corridor, because to close this corridor, to stop the operation of this corridor, actually means sentencing Nagorno-Karabakh to genocide," PM Pashinyan said, outlining three scenarios.

According to him, the first scenario could be the ethnic cleansing,

when the Armenians of Nagorno-Karabakh simply do not have the opportunity to live in their homes, on their land.

The next scenario, he said, could be the "loss of identity," which is another genocide model. "The struggle that Azerbaijan is waging against the toponyms and historical and cultural monuments of Nagorno Karabakh is the clearest proof of this," he said.

"And the third scenario is the physical destruction, the signs of which we have also seen and continue to see, starting from the sniper targeting civilians doing agricultural work, ending with bombing and rocketing of peaceful settlements and residents during the 44-day war," the Prime Minister said.

At the same time, he said: "I believe that dialogue and cooperation, including between Baku and Stepanakert, is the most important tool for preventing genocide."

## Valley Lahvosh Baking Co. – 4 Generations of Delicious Cracker Bread



Valley Lahvosh President with Conservancy Board, left to right, MC Dr. Matthew Jendian, Secretary Mary Ekmalian, President Agnes Saghatelyan, Chairman Van Der Mgrdechian and Treasurer Allan Jendian.

FRESNO — On Sunday afternoon, October 23, at the Fresno County Public Library-Woodward Park Branch, the Armenian Cultural Conservancy was pleased to host Agnes Saghatelyan, President & Owner and granddaughter of the founder Gazair Saghatelyan, who established the bakery in Downtown Fresno in 1922, after migrating from historic Armenia

pany. The company has expanded and grown throughout the decades to include food service, retail, and private label sales divisions. Its products are found at Houlihan's Restaurant and Bar, The Capital Grille, Yardhouse, Stockdale Country Club (Bakersfield), The Grapevine Restaurant (Arizona), M's Pub and Lazlo's Brewery & Grill (Omaha, Nebraska), DJ's Taphouse



(Moush). As the company celebrates a century of accomplishments, Agnes described the evolution of the family business that she took over from her mother Janet Saghatelyan in 1993 after graduating with a B.S. degree in Business-Management from Fresno State.

Introduced by Van Der Mgrdechian and Dr. Matthew Ari Jendian, Agnes described how the company's original name changed from California Baking Company to Valley Bakery in the 1940s and was rebranded in 1994 as Valley Lahvosh Baking Com-

& Grill (Minnesota), The Hardware Store Restaurant (Washington), JB Hook's Restaurant (Montana), The Toasted Frog (North Dakota), and in Costco gift baskets. The original retail store, on the corner of M & Santa Clara, is still open for sales on Fridays from 8:30 am to 4 pm, and if you arrive when they open, you will smell the wonderful aroma of fresh-baked peda bread. Visit <https://www.facebook.com/valleylahvoshbakingco> to sign up for tours and learn more about events.

## Karabakh Needs Security Guarantees

Continued from page 1

France's lower house of parliament adopted a resolutions accusing Azerbaijan of military aggression against Armenia and urging Paris to consider imposing sanctions on Baku. The French Senate passed a similar resolution on November 15.

"This is my first visit to Europe, I decided to start from France, because the French political field and public opinion are very active and united regarding the Artsakh issue. We hope that France will not be limited to this, and that support

will be exemplary for other states. They will also be involved in the effective settlement of our problem, which France is paving the way for," Harutyunyan said.

Responding to the journalist's question whether Armenia will be in danger if Artsakh does not exist, Harutyunyan stated. "Undoubtedly, Azerbaijan and Turkey do not hide their plans regarding Syunik and claim the entire territory of Armenia under the pretext of the Zangezur Corridor. We realize that today it is not only about Artsakh, but the entire Republic of Armenia is at risk, the entire Armenian people."

# Ինչ Օգնութիւն Է Ստացել Հայ-Առաքելական Եկեղեցին Հունգարիայի Կառավարութիւնից



## ՆԵՐՏԻ ԼԱԶԱՐԵԱՆ

Դեկտեմբերի 7-ին Աժ-ուժ կառավարութեան հետ հարցուպատասխանի ընթացքում արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյեանը, անդրադառնալով Հունգարիայի հետ դիւանագիտական յարաբերութիւնների վերականգնմանը, յայտարարել էր անցած տարիներին Հունգարիայի կառավարութեան ցուցաբերած՝ այդ թուով ֆինանսական աջակցութեան մասին:

Յիշեցնենք, որ Հայաստանը Հունգարիայի հետ դիւանագիտական յարաբերութիւնները կասեցրել էր 2012 թուականին, երբ այդ երկիրը Ատրպէյճանին արտայանձնեց 2004-ին Հունգարիայում հայ լեյտենանտ Գուրգէն Մարգարեանի դաժան սպանութեան համար դատապարտուած ատրպէյճանցի սպա Ռամիլ Սաֆարովին, վերջինս Ատրպէյճան վերադառնալուց անմիջապէս յետոյ յայտնուեց ազատութեան մէջ եւ պետական պարգեւների արժանացաւ:

«...Այդ իրադարձութիւնները չիշխելով՝ նաեւ չիշում ենք անցած տարի Դեկտեմբերին Հունգարիայի գործադրած ջանքերը 5 հազ րազմագերիների ազատ արձակման ուղղութեամբ: Հունգարական իշխանութիւնների ներկայացուցիչներն անձամբ հասան Պաքու եւ 5 ազատ արձակուող գերիների հետ միասին եկան Երեւան...: Մենք նաեւ չենք կարող չնկատել Հունգարական իշխանութիւնների աջակցութիւնը Covid-19-ի դէմ պայքարի շրջանակում. եթէ ճիշտ եմ չիշում, 100,000 դեղաչափ տրամադրեցին, եւ սա եւս կեանքեր փրկեց: Կան բազմաթիւ այլ օրինակներ, օրինակ՝ ֆինանսական աջակցութիւնը, որը հունգարական իշխանութիւնը ցոյց էր տալիս Հայ-առաքելական եկեղեցուն, բաւական շօշափելի ֆինանսական աջակցութիւն», - ասել էր Միրզոյեանը:

Այս յայտարարութիւնից յետոյ «Ազգ» թերթը գրել էր, թէ «Ծանօթ չէին, որ Հայ-առաքելական եկեղեցին էլ ահռելի ֆինանսական օգնութեան դիմաց լուռ է»:

«...Այն, որ հայ կաթողիկոսների եկեղեցին նորոգուել է Բուդապէսում, եւ Օրբանին գովաբանելով շքանշան են յանձնել, գիտէինք, բայց որ Հայ-առաքելական եկեղեցին էլ ահռելի ֆինանսական օգնութեան դիմաց լուռ է, ծանօթ չէր: Մեղա՛յ»:

«Փաստերի ստուգման հարթակը» փորձեց պարզել, թէ ի՞նչ ֆինանսական աջակցութիւն է ցուցաբերել Հունգարական իշխանութիւնը Հայ-առաքելական եկեղեցուն եւ արդեօ՞ք այդ օգնութիւնը դիտարկել են որպէս հայկական համայնքին՝ որպէս ազգային փոքրամասնութեանը տրուած օգնութիւն:

Ի պատասխան FIP.am-ի գրաւոր հարցման, ՀԱԵ տեղեկատուական համակարգի տնօրէն Եսայի քահանայ Արթնեանը տեղեկացեց, որ «Հունգարիայի կառավարութիւնը վերջին տարիներին Քրիստոնէական եկեղեցիներին, մասնաւորապէս՝ Միջին Արեւելքի եկեղեցիներին, որոնց թուով եւ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, հոգեւոր, սոցիալ-կրթական ծրագրերի իրականացման նպատակով պարբերաբար յատկացումներ է կատարում»:

«Նման օժանդակութիւն տրուել է Իրաքի եւ Դամասկոսի հայոց թեմերին, իսկ այս տարուայ սկզբում նաեւ Գեղարքունեաց թեմի Հայրորդաց տան նորոգութեան համար»,- նշում է Հայ-առաքելական եկեղեցին՝ առանց մանրամասնելու, թէ ինչ ծաւալի գումարի մասին է խօսքը:

Աւելի վաղ Հունգարիայի Հալածեալ քրիստոնեաների օգնութեան եւ հունգարական աջակցութեան ծրագրի պետքարտուղար Տրիստան Ազբեյը Հունգարիայի փոխվարչապետ Ժոլտ Շեմյենի հետ «Արմենիա» լրատուական

Շար.ը էջ 15

# Կրօնքի Թելադրած Տնարդութիւնը

## ԲԱԳՐԱՏ ԵՍՂՈՒԳԵԱՆ

Թուրքիա որքան որ կը յանձնուի կրօնամոլ համակարգի մը ճիրաններուն, այնքան յաճախակի կը դառնան տմարդի վերաբերմունքներու մասին լուրերը: Նախ հաստատենք թէ իշխանութիւնները որքան ալ յաւակնութիւն ունենան թուրքիան որպէս մեծ եւ կարեւոր երկիր ըլլալով ցոյց տալու, ան բազում երեւոյթներով յետամնաց է: Ի գուր եղած են հանրապետական շրջանի արդիականացման եւ արեւմտեան բարքերու մերձեցման ջանքերը: Ժողովուրդի ջախջախիչ մեծամասնութիւնը առանց դոյզն իսկ դիտակցական մեկնաբանութիւն մը ունենալու, յիմարօրէն ենթարկուած է իսլամ կրօնքի թելադրանքներուն: Սա ինքնին քաօսաչին վիճակ ստեղծելու յարմար երեւոյթ մըն է, քանի որ մինչեւ օրս երբեք չէ յստակացած այդ կրօնքի թելադրանքները: Ընդհակառակը իւրաքանչիւր հաւատացեալ եւ աւելի շատ ալ հոգեւորական իր ընկալումները կը ներկայացնէ իբրեւ կրօնքի թելադրանք: Նոյնիսկ ամենաձայնոյց մեկնաբանութիւնները դիւրաւ կը գտնեն այդ յիմար միտքերուն հետեւող զանգուածները:

Երեւոյթը շատ տարբեր էր քրիստոնէութեան հաշուոյն եւս: Միջնադարեան ընկալումներու մէջ քրիստոնէութիւնն ալ նոյն կերպով կը շահագործուէր քաղաքական շահերու համար: Բայց կարեւոր տարբերութիւն մը ըստ որում, քրիստոնէութիւնը ապրեցաւ վերածնունդի շրջան մը: Բողոքական հոսանքները ուշքի բերին քրիստոնէութիւնը եւ այսպէսով մանաւանդ ալ պետական համակարգէն վերջնականապէս դուրս բերին կրօնի գործօնը:

Այս օրերուս մամուլի էջերուն մէջ կը հանդիպինք սահմուկեցուցիչ լուրերու: Վերջերս պարզուեցաւ թէ ադանդաւոր մը իր վեցամեայ դուստրը ամուս-

նացուցած է իր ադանդի ուխտաւոր 29 ամեայ անձի մը հետ: Այս սահմուկեցուցիչ դէպքը պարզուեցաւ, երբ երիտասարդ կինը խոստովանեցաւ ընտանեկան յարկի տակ պատահած այս տմարդութիւնը:

Պարսկաստանի մէջ իբրեւ թէ հասարակութեան բարոյական արժանիքները պահպանելու պաշտօնակոչուած յատուկ ոստիկանական ջոկատներու գործած ոճիրը այդ երկրէ ներս ալ շատ մեծ հակազդեցութիւն յառաջացուց: Երկու ամիսէն երկար ժամանակէ ի վեր շարունակուող բողոքի ցոյցերը վերջապէս իշխանութիւնները կը պարտադրեն որոշ ետքայլ ընելու: Սակայն համաշխարհային մահմետականութիւնը կը կարօտի աւելի լուրջ հաշուեյարդարներ դիմագրաւելու:

Ներկայ ժամանակներուն բոլորովին անիմաստ դարձած են կանանց հանդէպ այրիշիտան դրդումներով կատարուած ոտնձգութիւնները: Կինը անբաւարար կամ թերի համարող բոլոր հասկացողութիւնները ժամանակավրէպ են եւ դատապարտուած կործանումի: Բայց այսօր ալ բնաւ քիչ չեն այդ յետամնացութիւնը շահագործելու ձգտումները: Մանաւանդ արեւմտեան աշխարհէն յատկապէս ալ արդի դրամապաշտ համակարգէն եկած շահագործման եղանակները արգելք են համաշխարհային մարդկութեան այդ տմարդի մտայնութիւնը վերջնականապէս խորտակելուն դիմաց: Յիշենք որ ամերիկեան քաղաքականութեան հնարած «կանաչ գօտի»ի տեսութիւնով իբրեւ թէ խորհրդային միութիւնը անդամալոյծ ընելու միտող ռազմավարութիւնը այսօր իր հունձքը կու տայ Փաքիստանի, Աֆղանստանի եւ այլ երկիրներու մէջ կազմակերպուած ճիհատական ահաբեկչութիւնով: Ո՛ւր տեսնուած է թէ չարիքէն բարիք ծնի:

**HOMENMEN**  
**Ladies Auxiliary invites you to**  
**CHRISTMAS**  
**DINNER DANCE PARTY**  
**CELEBRATE THE SEASON WITH DJ & SALSA DANCE**  
**HOLIDAY SPIRITS**  
**SATURDAY, December 17<sup>TH</sup> AT 7:30PM**  
 Location: 1060 N. ALLEN AVE., PASADENA, CA 91104  
 Donation \$100  
 For more information, please call Karine (818) 324-0574, or Lena (626) 485-6434

### Տեղեկատվություն «Մեր Կիւմրի» Ծրագրի Ընթացքին Վերաբերեալ



**Տեղեկատվություն Մեր Գյուլմրի ծրագրի վերաբերյալ**

«Հայաստան» համահայկական հիմնադրամին կողմէ «Մուշ-2» բնակելի թաղամասին մէջ բազմաբնակարան երկու շէնքերու եւ մանկապարտէզի շինարարական աշխատանքները աւարտած են վերջերս, որմէ յետոյ, օրէնքով սահմանուած կարգով Հիմնադրամը դիմած է եւ 18. 11.2022-ին ստացած է կառուցուած բազմաբնակարան երկու շէնքերու սեփականութեան իրաւունքը հաստատելու համար անհրաժեշտ փաստաթուղթերը:

Աւարտական փաստաթուղթերու հիման վրայ՝ Հիմնադրամը ՀՀ անշարժ գոյքի պետական կադաստրի կոմիտէին մէջ 02.12.2022-ին արձանագրած է շինութեան նկատմամբ իր սեփականութեան իրաւունքը:

Կառուցած բազմաբնակարան երկու շէնքերու սեփականութեան իրաւունքի արձանագրութենէն յետոյ, Հիմնադրամը ՀՀ օրէնսդրութեամբ սահմանուած կարգով կը դիմէ՝ արձանագրելու երկու շէնքերու ծաւալով շինութեան նախագիծով նախատեսուած առանձնացուած միաւորները՝ 36 բնակարաններու նկատմամբ առանձին սեփականութեան վկայականները ստանալու նպատակով:

Բոլոր բնակարաններուն նկատմամբ սեփականութեան վկայականներու ստացումէն յետոյ, Հիմնադրամը ընտրուած բոլոր 36 շահառուներուն հետ պիտի կնքէ անշարժ գոյքի անհատուց օգտագործման պայմանագրեր՝ նոտարական վաւերացմամբ եւ պայմանագրէն ծագող բոլոր իրաւունքները պիտի արձանագրուին ՀՀ անշարժ գոյքի պետական կադաստրի կոմիտէին մէջ: Նոտարական վաւերականաց ման եւ արձանագրութեան բոլոր ծախսերը եւս պիտի ընդհանրուի «Հայաստան» համահայկական հիմնադրամը:

Բնակարաններու նկատմամբ սեփականութեան իրաւունքը արձանագրելէ յետոյ միայն, շահառուները հնարաւորութիւն պիտի ստանան դիմելու եւ բաժանորդագրուելու ջրերի, հոսանքի եւ կազի անհատական հաշուիչները ստանալու եւ տեղադրելու համար:

Կը փափաքինք ընդգծել, որ «Մուշ-2» թաղամասին մէջ կառուցուած երկու բազմաբնակարան շէնքերու, մանկապարտէզի եւ եւս երկու շէնքերու կառուցման ծրագիրը Հիմնադրամը յատուկ մշակած է երկրաշարժէն տուժած եւ 30 տարի տնակաւաններուն մէջ բնակող կիւմրեցիներու հոգը թօթափելու նպատակով, որուն շրջանակին մէջ առաջնահերթ շահագրգիռ կողմը Հիմնադրամն է՝ իրականացնելու այս կարեւոր եւ

աննախադէպ ծրագիրը: Նշենք, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամին կողմէ «Մուշ-2» թաղամասի բազմաբնակարան շէնքերու 36 շահառուները ընտրուած են ըստ յատուկ մշակուած չափորոշիչներու՝ երկրաշարժէն տուժած ըլլալու հանգամանքը, երբեւէ ԲԳՎ կամ տուն ստացած չըլլալը, անչափահաս երեխաներու առկայութիւնը, բազմազաւակ ընտանիք ըլլալը: Ծահառուներու ընտրութենէն յետոյ ցուցակները նաեւ քննարկուած ու համաձայնեցուած են Կիւմրիի քաղաքապետարանին հետ, որպէսզի շահառուներուն ընտրութիւնը կատարուի լիովին անաշտ:

Միեւնոյն ժամանակ կը տեղեկացնենք, որ «Հեռուստամարաթիւն-2022»-ի նկարահանումներու ծիրին մէջ, «Մուշ-2» թաղամասի շահառուներուն իրենց բնակարաններու բանալիները խորհրդանշական յանձնուած են, երբ անոնց տեղեկացուցած են իրենց շահառու ըլլալու մասին:

Ծահառուները հնարաւորութիւն պիտի ունենան մուտք գործելու եւ լիարժէք շահագործելու իրենց բնակարանները՝ վերը նշուած գործընթացները օրէնսդրութեան համապատասխան աւարտելէ յետոյ: Ընտրուած շահառուներու ցանկին մէջ որեւէ փոփոխութիւն չէ եղած եւ պիտի չըլլայ:

Յարկ կը համարենք նշել, որ Դեկտեմբեր 7-ին Հիմնադրամին կողմէ «Մուշ-2» թաղամասի շէնքերու բացման վերաբերեալ տարածուող լուրերը ապատեղեկատուութիւն են: Ծէնքերու բացման վերաբերեալ տեղեկատուութիւն տարածելը իրաւասու է եւ պիտի հրապարակէ միայն «Հայաստան» համահայկական հիմնադրամը:

Կը յորդորենք գերծ մնալ Հիմնադրամին անունը անհարկի շահարկէն եւ Հիմնադրամին անունով ապատեղեկատուութիւն տարածելէ: Ապատեղեկատուութեան տարածումէն խուսափելու նպատակով, հարցերու առկայութեան պարագային, բոլոր շահառուներէն կը խնդրենք դիմել անմիջապէս «Հայաստան» համահայկական հիմնադրամին:

Հաշուի առնելով, որ Հիմնադրամը եւս երկու բազմաբնակարան շէնք կը կառուցէ նոյն թաղամասին մէջ, կոչ կ'ընենք մեր բոլոր հայրենակիցներուն, որոնք կը հետեւին Հիմնադրամին գործունէութեան, իրենց նուիրատուութիւններով մասնակցելու այս եզակի ծրագրի կեանքի կոչման:

Ձեր նուիրատուութիւնները կրնաք կատարել առցանց [www.himnadram.org/hy/donate](http://www.himnadram.org/hy/donate) կամ դրամատնային փոխանցումներու միջոցով:

### «Հայկական Ներկայութիւնը Սուրբ Երկրի Մէջ» Խորագիրով Խորհրդածողով Լիւքսեմպուրկի Մէջ



Դեկտեմբեր 7-ին Լիւքսեմպուրկի Սան Միշէլ եկեղեցու մէջ (Eglise Saint Michel) կայացաւ «Հայկական ներկայութիւնը Սուրբ երկրի մէջ» խորագիրով խորհրդածողով: Ան կազմակերպած էր 1916 թուականին հիմնադրուած Լիւքսեմպուրկի Մեծ Դքսութեան Conference Saint-Yves (CSY) կաթողիկէ իրաւաբաններու գիտախումբը:

Ներածական խօսքով՝ Հայաստանի աշխարհաքաղաքական արդի հիմնախնդիրներու մասին հանդէս եկաւ Լիւքսեմպուրկի եւ Նիտերլանտներու մէջ ՀՀ դեսպան պարոն Տիգրան Պալայեանը:

Խորհրդածողովին հայկական ներկայութեան մասին Սուրբ երկրի մէջ 4-րդէն 21-րդ դարերուն, բանախօսեց կրօնական մարդաբան, Երուսաղէմի քրիստոնէական եկեղեցիներու եւ սրբավայրերու մասնագէտ, Ֆրանսայի գիտական

հետազոտութիւններու կեդրոնի (CNRS) նախկին գիտաշխատող Սօսի Անտէգեանը:

Հանդիպումը եզրափակեց Հայ Առաքելական Եկեղեցու Արեւմտեան Եւրոպայի հայրապետական պատուիրակ եւ Սուրբ Աթոռի մէջ ներկայացուցիչ Գերշ. Տ. Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեան, որ ընդհանուր տեղեկութիւններ հաղորդեց Հայ Եկեղեցու եւ մասնաւորապէս Երուսաղէմի Պատրիարքութեան ու անոր Սբ. Յակոբ Հայոց վանքի մասին:

Իր ելույթի աւարտին Սրբազան Հօր հրաւերով, միասնական աղօթք կատարուեցաւ:

Խորհրդածողովին ներկայ էին Լիւքսեմպուրկի կաթողիկէ առաջնորդի փոխանորդ Արքեպիսկոպոս Լէօ Վազենքը, Լիւքսեմպուրքի մէջ Յունաստանի դեսպան պարոն Անգելոս Իպսիլատիսը, բարձրաստիճան ալ պաշտօնեաներ եւ հիւրեր:



### DETERMINED & COMPASSIONATE CRIMINAL DEFENSE

- JUVENILE DEFENSE
- DOMESTIC VIOLENCE
- ASSAULT & BATTERY CHARGES
- DRIVING UNDER THE INFLUENCE (DUI)
- VEHICULAR OFFENSES/HIT AND RUN
- IMMIGRATION - MOTION TO VACATE A PLEA
- ROBBERY AND THEFT OFFENSES
- ASSAULT WITH A DEADLY WEAPON
- CRIMES INVOLVING POLICE OFFICERS
- CRIMINAL THREATS
- WEAPON CHARGES
- DRUG OFFENSES
- SEX CRIMES
- THEFT CRIMES
- GANG CRIMES



**ALICE TAVOUKJIAN**  
Attorney At Law

At the law office of ALICE TAVOUKJIAN, we provide zealous representation to achieve the best possible outcome on your behalf.

### LAW OFFICES OF ALICE TAVOUKJIAN, PC

[www.TAVOUKJIANLAW.com](http://www.TAVOUKJIANLAW.com) CALL FOR A FREE CONSULTATION  
135 E. Valley Bl, #B, Alhambra, CA 91801 **626.386.8606**



### Տեղի է ունեցել Ա. Սպենդիարեանի Տուն-Թանգարանի 55-Ամեակին Նուիրուած Միջոցառում



Ա. Սպենդիարեանի տուն-թանգարանի դահլիճում Դեկտեմբերի 9-ին տեղի ունեցավ տուն-թանգարանի յիսուներորդ ամեակին նուիրուած հանդիսութիւնը: Միջոցառմանը հրահարուած էին գործընկեր հաստատութիւնների ներկայացուցիչներ, Ա. Սպենդիարեանի տուն-թանգարանի բարեկամ մշակույթի գործիչներ եւ գիտական խորհրդի անդամներ, նախկին աշխատակիցներ:

Բացման խօսքում տուն-թանգարանի տնօրէն Մարինէ Օթարեանը հիւրերին շնորհաւորեց Երեւանում առաջին երաժշտական յուշային թանգարանի բացման տարեդարձի առիթով եւ կարեւորեց աշխատակիցների դերը մշակութային այս կարեւոր կեդրոնի կայացման գործում: Ներկայացուցեց «55-ամեայ թանգարանի պատմութիւնը լուսանկարների խճապատութիւնում» խորագրով ժամանակաւոր ցուցահանդէսը: Ա. Սպենդիարեանի ժառանգութեան հանրահռչակման գործում տուն-թանգարանի դերը արժեւորող խօսքով եւ բարեմաղթանքներով հանդէս եկան Երեւանի Կոմիտասի անուան կոնսերուատորիայի պրոֆեսորներ Արմէն Բուդաղեանը եւ Դաւիթ Ղազարեանը, ՀՀ ԳԱԱ Արուեստի ինստիտուտի տնօրէն Աննա Ասատրեանը, ՀՀ Ժողովրդական նկարիչ Վալմարը, Մարտիրոս Սարեանի տուն-թանգարանի տնօրէն Ռուզան Սարեանը, կոմպոզիտոր Ռոբերտ Ամիրխանեանը, որը նա հանպատրաստից եւ սրտաբուխ կատարեց իր «Անանձնութիւն» երգը: Յուշադրուեց թանգարանի գիտաշխատող ինեսսա Խաչատրեանի հեղինակած «55 կողմ՝ 55-ամեայ թանգարանից» տեսաֆիլմը, որը ներկայացնում էր տուն-թանգարանի՝ կէս դարից աւելի շարունակուող տարեգրութիւնը:

Սպենդիարեանական երկերի՝ փողային նուագարանների համար փոխադրումներով հանդէս եկան Թամար Յարութիւնեանը (ֆլեյտա), Վարդգէս Յովհաննիսեանը (ֆագոտ), Էրիկ Գրիգորեանը (հոբոյ) եւ Կատարինէ Յովսէփեանը (դասամուր):

Թանգարանի կողմից շնորհակալագրեր յանձնուեցին թանգարանի նախկին աշխատակիցներ՝ գիտաշխատողներ Կարինէ Մարգարեանին, Սարգիս Յովհաննիսեանին, ինչպէս նաեւ թանգարանի նորեկ գիտաշխատող Կատարինէ Յովսէփեանին:

Տօնական օրն ու տրամադրութիւնն ամփոփուեցին ամբողջացան խմբակային լուսանկարներում:

### Հայ Բենադրիչի Մասնակցութիւնը Իրլանտայի Միջազգային Փառատօնին

Իրլանտայի մայրաքաղաք Տուպլինի մէջ, յառաջիկայ Փետրուարի 23-էն Մարտ 4, 2023, տեղի պիտի ունենայ Շարժապատկերի Միջազգային փառատօն: Շարժապատկերի Հայկական ընկերակցութիւնն այս առիթը յայտարարեց որ ֆիլմարտադրիչ եւ բեմադրիչ Արտաւազդ Փալէշեանի շարժապատկերները եւս պիտի ցուցադրուին վերոյիշեալ փառատօնի ընթացքին:

Արտաւազդ Փալէշեան ցարդ արտադրած է 24 վաւերագրական ֆիլմեր, որոնք ընդհանրապէս փաստավաւերագրական են եւ արխիւ-

ներէն առնուելով վերարտադրուած են ու վերահամադրուած:

Հուշակաւոր բեմադրիչ Սերգէյ Փարաջանովի հաստատումով «Արտաւազդ Փալէշեանը իսկական հանճարներու շարքին կարելի է դասել»: Իր շարժապատկերները գուրկ են շարադրանքներէ եւ հիմնաւորուած սեւ ու ճերմակ վաւերագրական նկարներով:

Փառատօնի փակման օրը՝ Մարտի 4-ին, տեղի պիտի ունենայ հարցազրոյց-ասուլիս, հիւրընկալութեամբ իրլանտացի տնօրէն Թադ Օփուլլիվանի:

### «Իմ Ժամանակի Մեծերը». ՀՀ Ժողովրդական Նկարիչ Անատոլի Աւետեանի Դիմանկարների Ցուցադրութիւն



ՀՀ ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանեանն այսօր Հայաստանի «Թէքէեան» մշակութային միութիւնում ներկայ է եղել Հայաստանի Հանրապետութեան Ժողովրդական նկարիչ Անատոլի Աւետեանի «Իմ Ժամանակի մեծերը» խորագրով դիմանկարների ցուցադրութեան բացմանը:

Նախարար Վահրամ Դումանեանը շնորհաւորել է Անատոլի Աւետեանին ցուցահանդէսի բացման կապակցութեամբ, նրա հետ շրջել է ցուցադրութեան սրահում, զրուցել եւ հանգամանալից ծանօթացել վարպետի աշխատանքներին ու ստեղծագործական գործունէութեանը:

Ցուցադրուած են շուրջ 30 աշխատանքներ, որոնք հեղինակի 2022 թուականի ստեղծագործութիւններն են: Ներկայացուած են Մարտիրոս Սարեանի, Մինաս Աւետիսեանի, Շառլ Ազնաւուրի, Ռուլիամ Սարոյեանի, Յարութիւն Կալենցի, Առնօ Բաբաջանեանի, Վիկտոր Համբարձումեանի, Սերգէյ Փարաջանովի, Տիգրան Պետրոսեանի, Պարոյր Սեւակի, Վազգէն Առաջին Կաթողիկոսի, Սերգէյ Դովլաթովի, Հրանտ Մաթեոսեանի, Յովհաննէս Բաղդամեանի, Լուսինէ Չաքարեանի եւ այլոց դիմանկարները:

Ցուցահանդէսին ներկայ էին արուեստագէտներ, մտաւորականներ, արուեստասէր հանրութիւն:

**Norayr Daduryan Armeno-Turkish Translation Services**  
From Armeno-Turkish to Armenian and English languages.  
Bring your family's history back to life!  
Family letters, postcards, diaries, and more...  
Please reach out for quotes  
Website: [norayr.daduryan.com](http://norayr.daduryan.com)  
Email: [norayrdaduryan@gmail.com](mailto:norayrdaduryan@gmail.com)


**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

Yes, I wish to subscribe to Massis Weekly  
Enclosed a check for (one year)  
\* \$50,00 \* \$100,00 (first class) for USA  
\$ 125,00 (Air Mail) for Canada.  
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----  
Address: -----  
City: ----- State:----- Zip Code:-----  
Country: -----  
Tel:-----  
Email:-----

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ**  
**ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ**  
**(200 ՀՈԳԻ ՀԱՄԱՐ)**  
**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**  
**ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝**  
**ԵՆՈԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680**

ՄԱՅԱԶԴ



ԳԷՈՐԳ ԳԱՐԱՃՐՃԵԱՆ (Ծնեալ՝ 1935ին, Հալէպ, Սուրիա)

Սրտի դառն կսկիծով կը գուժենք մեր սիրեցեալ ամուսնոյն, հօր, մեծ հօր, եղբօր եւ հարազատին՝ Գէորգ Գարաճրճեանի մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 29 Նոյեմբեր 2022ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Երեքշաբթի, 20 Դեկտեմբեր 2022ին, առաւօտեան ժամը 9ին, Hollywood Hills Forest Lawn գերեզմանատան Old North Church մատրան մէջ (կարմիր եկեղեցի), ապա Ազգային թաղումը՝ նոյն գերեզմանատան մէջ:

- Սգակիրներ՝ Այրին՝ Սաթենիկ Գարաճրճեան Զաւակը՝ Արա եւ Լիլիթ Գարաճրճեան եւ զաւակը՝ Գէորգ Դուստրը՝ Մարալ եւ Վիգէն Գրաճեան եւ դուստրը՝ Լէա Զաւակը՝ Աբրահամ Գարաճրճեան Թոռը՝ Արլէն եւ Թանիա Գրաճեան Եղբայրը՝ տղթ. Պետրոս եւ Հուրիկ Գարաճրճեան եւ դուստրը՝ Սարին Եղբօր դուստրը՝ Զարլի եւ Գարէն Նախտուլ Բոյրը՝ Ռօզին եւ Վարուժ Կոստանեան եւ դուստրը՝ Կալիա Քրոջ զաւակները՝ տղթ. Արմէն եւ Լենա Յովհաննէսեան Տղթ. Յարուժ եւ Նաթալի Կոստանեան Աներորդին՝ տղթ. Պօղոս եւ Օտիլ Երեւանեան եւ զաւակները՝ տղթ. Ալեքս եւ Ալին Աներորդիին զաւակը՝ տղթ. Արմէն եւ Քլէր Երեւանեան Զարմիկը՝ Վարուժ եւ Լուսի Թուրթիւեան Եւ համայն Գարաճրճեան, Սահակեան, Գրաճեան, Կոստանեան, Սարաֆեան, Տէքիրմէնճեան, Եուսէֆ, Հաժժար, Քէօզկէրեան, Շոհմէլեան, Պիտանեան եւ Յովհաննէսեան ընտանիքները, հարազատներն ու բարեկամները

Փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կը խնդրուի կատարել Արքեպիսկոպոսական Եկեղեցւոյ (Holy Martyrs Armenian Apostolic Church, 5300 White Oak Ave., Encino, CA 91316):

DEATH NOTICE

KEVORK KARAJERJIAN Born in 1935, Aleppo, Syria

Kevoork Karajerjian, beloved husband, father, grandfather, brother, and relative, passed away on Tuesday, November 29, 2022.


National funeral services followed by interment will be held on Tuesday, December 20 at 9 a.m. at Old North Church in Hollywood Hills Forest Lawn Memorial Park.

- He is survived by his: Wife, Satenig Karajerjian Son, Ara and Lilit Karajerjian and son, Kevoork Daughter, Maral and Viken Kradjian and daughter, Lea Son, Abraham Karajerjian Grandson, Arlen and Tania Kradjian Brother, Dr. Bedros and Hourig Karajerjian and daughter, Sarine Niece, Charlie and Karen Nakhoul Sister, Rosine and Varouj Gostanian and daughter, Galia Niece, Dr. Armen and Lena Hovannessian Nephew, Dr. Harout and Natalie Gostanian Brother-in-law, Dr. Boghos and Odile Yerevanian and children, Dr. Alex and Aline Brother-in-law's son, Dr. Armen and Claire Yerevanian Cousin, Varouj and Lucy Toutlian

And the entire Karajerjian, Sahagian, Kradjian, Gostanian, Sarafian, Dekermenjian, Youssef, Hajjar, Keushgerian, Shohmelian, Bidanian, and Hovannessian families, relatives and friends.

In lieu of flowers, donations may be made to Holy Martyrs Armenian Apostolic Church, 5300 White Oak Ave., Encino, CA 91316.

ՀՈԳԵՅԱՆԳԻՍ



ՄԱՐՕ (ԵՐԿԱՅՆՀԱՐՍԵԱՆ) ԱՃԻՄԵԱՆ

Հանգուցեալ Մարօ Աճէմեանի մահուան շրջ տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 18 Դեկտեմբեր 2022ին, Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարին մէջ, 900 Lincoln Ave., յաւարտ Ս. Պատարագի:

- Սգակիրներ՝ Ամուսինը՝ Հրաչ Աճէմեան Դուստրը՝ Սալբի եւ Վահէ Ռպչեան եւ զաւակները՝ Շանթ, Արէն եւ Վահան Զաւակը՝ Արա Աճէմեան Եղբայրը՝ Օհան եւ Իվոն Երկայնհարսեան եւ զաւակները՝ Սոնա եւ Նայիրի Եղբայրը՝ Գօգօ Երկայնհարսեան եւ համայն Աճէմեան, Ռպչեան, Առաքելեան, Մելքոնեան, Տէմիրճեան, Պալեան, Տավանի, Յովհաննէսեան եւ Գիւբէլեան ընտանիքները, հարազատներն ու բարեկամները:

Ինչ Օգնութիւն Է Ստացել

Շարունակուած էջ 11-էն

գործակալութեանը տուած համատեղ հարցազրոյցում նշել էր, որ Հունգարիայի կառավարութիւնն աշխարհում առաջին վարչակազմն էր, որը բարձրացրեց հալածուող քրիստոնեաներին պետական մակարդակով օգնելու հարցը:

«Վերջին տարիներին իմ դեկավարած հունգարական օգնութեան ծրագրի շրջանակում Հունգարիայի կառավարութիւնն աջակցել է Միրիայում Հայ-առաքելական եկեղեցու վնասուած դպրոցի վերականգնմանը, Իրաքի Զախուքաղաքի եկեղեցու վերականգնմանը եւ օգնութիւն է տրամադրել Լիբանանում հայ կաթողիկոսական ընտանիքներին: Հայաստանում մենք աջակցել ենք Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու եւ կրօնական հասարակական կազմակերպութիւնների մարդասիրական եւ բարեգործական աշխատանքներին», - նշել էր Տրիստան Ազբէլը:

Այսպիսով, ՀԱԵ-ն հաստատում է ԱԳ նախարար Արարատ Միրզոյեանի յայտարարութիւնը. Հունգարիայի կառավարութիւնն աջակցել է եկեղեցիների վերանորոգմանը, մասնաւորապէս՝ Իրաքի եւ Դամասկոսի հայոց թեմերին, իսկ այս տարուաւ սկզբում նաեւ մասնակցել է Գեղարքունեաց թեմի Հայրդաջ տան նորոգմանը:

Դեկտեմբերի 9-ին ՀՀԿ փոխնախագահ Արմէն Աշոտեանը եւս Pressing հաղորդման ընթացքում անդրադարձել է Հունգարիայի աջակցութեանը՝ նշելով, որ ՀԱԵ-ին աջակցութիւն է տրուել, քանի որ Հունգարիայի սահմանադրութեամբ ազգային փոքրամասնութիւնները, այդ թւում՝ հայերը, ունեն որոշակի իրաւունքներ:

«Որովհետեւ ճանաչել է հայերին որպէս ազգային փոքրամասնութիւն: Դա գործող իշխանութիւնների վաստակը չէ, դա մեր հայրենակիցների վաստակն է... Այդ սահմանադրութիւնը մեզ լաւութիւն չի արել, որ փող են տալիս եկեղեցիներին», - ասել էր Աշոտեանը՝ յաւելելով, որ Հունգարիայում եւ Ռումինիայի աւելի քան 20 հայկական եկեղեցի կայ:

Հունգարիայի սահմանադրութեան մէջ նշուած է, որ այդ երկիրը «պարտաւորուած է պաշտպանել ու խթանել իր տարածքում ապրող ազգային փոքրամասնութիւնների լեզուն ու մշակոյթը, այդ թւում նաեւ՝ կարգատեան աւազանում մարդու կողմից ստեղծուած ու բնական արժէքները»:

Փաստացի, հունգարական սահմանադրութիւնը նախատեսում է միայն իր տարածքում գտնուող՝ այլ ազգերի նիւթական ու ոչ նիւթական մշակութային ժառանգութեան պահպանութիւն: Դրանում չի սահմանուած, որ այդ երկիրը պարտաւոր է պահպանել իր տարածքում ապրող ազգային փոքրամասնութիւնների մշակոյթն այլ երկրներում՝ իր սահմաններից դուրս:

Այսպիսով, Արմէն Աշոտեանի դիտարկումը, թէ Միրզոյեանի կողմից յիշատակուած աջակցութիւնը ՀԱԵ-ին բխել է բացառապէս այդ երկրի սահմանադրութեամբ հայերի հանդէպ որպէս ազգային փոքրամասնութիւն ունեցած պարտաւորութիւնից, ճիշտ չէ, քանի որ Հունգարիայի կառավարութիւնը ֆինանսական աջակցութիւն է յատկացրել նաեւ Իրաքի, Դամասկոսի հայոց թեմերին եւ Գեղարքունեաց թեմին՝ Հայրդաջ տան նորոգութեան համար:

« FIP.am »

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին Masis2@earthlink.net (626) 797-7680

### Ռոնալդու. Ցաւօք, Երազանքը Աւարտեցաւ

Փորթուգալի հաւաքականի 37-ամեայ յարձակող Կրիշտիանու Ռոնալդուսը ընկերային ցանցերուն վրայ կատարած գրառումով մեկնաբանած է ազգային խումբի ձախողումը Ֆուլթայոլի Աշխարհի Բաժակի քառորդ աւարտականին 0:1 արդիւնքով պարտութիւնը Մարոքի հաւաքականին:



«Փորթուգալի հետ յաղթանակը Աշխարհի Բաժակի իմ ամենամեծ եւ յաւանդեալ երազանքն էր: Ես բազմաթիւ միջազգային տիտղոսներ նուաճած եմ նաեւ Փորթուգալի հետ, բայց մեր երկիրի նման աշխարհի մէջ ամենաբարձր մակարդակի բարձրացնելը իմ ամենամեծ երազանքն էր:

«Երկար տարիներ պայքարած եմ անոր համար, շատ բան տուած եմ այդ երազանքի համար: 16 տարիներուն, 5 աշխարհի առաջնութիւններուն ես եղած եմ մեծագոյն ֆուտթոլիստներու կողքին, միլիոնաւոր փորթուգալացիների աջակցութեամբ, տուած եմ բոլոր ուժերս, խաղաղաշունթ թողած եմ ամէն ինչ: Երբեք ուշադրութիւն չեմ դարձուձած պայքարի ծանրութեանը եւ երբեք չէի հրաժարած այդ երազանքէն:

«Ցաւօք, երէկ երազանքը աւարտեցաւ: Պէտք չէ արձագանքել պարտութեանը: Ես պարզապէս կը ցանկամ, որ բոլորը իմանան՝ իմ հաւատարմութիւնը Փորթուգալին ոչ մէկ ակնթարթ չէ փոխուած: Ես միշտ եղած եմ պայքարի մէջ եւ երբեք երես չէի թեքի իմ ընկերներէն եւ երկրէն»:

### Տեշամը Եւ 2 Տարի Կը Գլխաւորէ Ֆրանսայի Հաւաքականը

Ֆրանսայի ֆուլթայոլի ֆետերացիան հրաժարած է ազգային խումբի գլխաւոր մարզիչի պաշտօնին Զինետին Զիտանին նշանակելու գաղափարէն, կը հաղորդէ ֆրանսական Le Parisien-ը:



Տիտիէ Տեշամը Ֆրանսայի հաւաքականը կը գլխաւորէ եւս երկու տարի՝ մինչեւ Եւրօ-2024-ի աւարտը:

Տեշամ Ֆրանսայի հաւաքականը կը գլխաւորէ 2012 թուականէն: 54-ամեայ մասնագէտի պայմանագիրը նախատեսուած է մինչեւ Աշխարհի Բաժակի աւարտը:

Տեշամի ղեկավարութեամբ Ֆրանսան դարձած է 2016թ. Եւրոպայի փոխախոյան, 2018թ. աշխարհի ախոյան, 2021թ. Ազգերու Լիգայի գաւաթակիր:

### Հարի Քեյն. Պարտութեան Անբողջ Պատասխանատուութիւնը Եւ Կը Կրեն

Անգլիոյի հաւաքականի եւ Լոնտոնի «Թոթենհեմի» յարձակող Հարի Քեյնը ներողութիւն խնդրած եւ կը ստանձնած ամբողջ պատասխանատուութիւնը՝ Աշխարհի Բաժակի քառորդ եզրափակիչին աշխարհի ախոյան Ֆրանսայէն կրած պարտութեան համար:



«Ես հպարտ եմ իմ խումբի ընկերներով: Մենք լաւ հնարաւորութիւն ունէինք, բայց ֆուլթայոլի մէջ ամէն ինչ կը վճռուի նոյնիսկ ամենափոքր մանրուքները: Ես խումբի աւագն եմ, եւ ես չկրցայ արդիւնաւէտ նշանակել վճռորոշ 11-մեթրանոցը: Այս պարտութեան ամբողջ պատասխանատուութիւնը ես կը կրեմ:

Ես վստահ էի իմ ուժերուն, պարզապէս չկարողացայ կատարել այն, ինչ կը ցանկայի ընել: Եւ ասով ստիպուած կ'ըլլամ ապրիլ մնացած կեանքս», - Հարի Քեյնի խօսքը կը մէջբերէ BBC-ն:

### ՖիՖԱ-ն Հրաժարած է ԱԱ-ն 2 Տարին Մէկ Կատարելու Գաղափարէն

Ֆուլթայոլի միջազգային ֆետերացիան հրաժարած է Աշխարհի Բաժակը երկու տարի անգամ մը կատարելու գաղափարէ: Այդ մասին յայտնած է կազմակերպութեան համաշխարհային զարգացման բաժնի ղեկավար Արսեն Վենկերը:

Լոնտոնի «Արսենալի» նախկին գլխաւոր մարզիչը մօտ երկու տարի կը փորձէր ՖիՖԱ-ի անդամ երկիրներու ֆետերացիաներուն համոզել Աշխարհի Բաժակը աւելի յաճախ կատարելու նպատակայարմարութիւնը: Եւրոպայի եւ Հարավային Ամերիկայի ֆետերացիաները դէմ դուրս եկան եւ սպառնացին կազմակերպել առանձին աշխարհի առաջնութիւնը:

Աշխարհի Բաժակը երկու տարի մէկ կատարելու կողմ էին փոքրիկները եւ ասիական երկրներու ֆետերացիաները:

### UFC-282. Էտմըն Շահպազեանի Յաղթանակը Լաւ Վեկասի Մէջ



Լաւ Վեկասի մէջ տեղի ունեցած խառն մենամարտերու UFC-282 մրցաշարին յաղթանակի հասած է էտմեն Շահպազեանը:

25-ամեայ ամերիկահայ մարտիկը մենամարտած է Գոնկույի ներկայացուցիչ Տալչա Լունջիամպուլայի հետ եւ 35-ամեայ մրցակիցին յաղթած է երկրորդ ռաունտին:

էտմըն Շահպազեան խառն մենամարտերուն ընթացքին արձանագրած է 12-րդ յաղթանակը: Կրած է 3 պարտութիւն:

### Գագիկ Խաչիկեան 4 Մետալ Նուաճած Է Վորոնիցի Գաւաթին

Գագիկ Խաչիկեանը Մոսկուայի մէջ կատարուած ոլիմպիական ախոյան Միխայէլ Վորոնիցի անուան գաւաթի մրցաշարքի ընթացքին նուաճած է 1 ոսկի եւ 3 պրոնզէ մետալ:

Հայաստանի միակ ներկայացուցիչը ոսկի մետալակիր դարձած է նժոյգ թափեր վարժութեան: Պրոնզէ մետալները ան նուաճած է զուգափայտի, պտտածողի եւ բազմամարտուի 47 մասնակիցներու մէջ:

### Աշխարհի Բաժակի Կիսաեզրափակիչի Եւ Եզրափակիչի Պաշտօնական Գնդակը

Ֆուլթայոլի միջազգային ֆետերացիան ներկայացուց աշխարհի առաջնութեան կիսաեզրափակիչի եւ եզրափակիչի պաշտօնական գնդակը: Այն կը կոչուի Al Hilm՝ «Երազանք»:

Այն նոյնպէս Connected Ball թեքնոլոժիով է, լեցուած սենսորային ցուցիչով, որ միացուած է VAR համակարգին: Արտադրողը Adidas ընկերութիւնն է:

### Տիտէն Հեռացաւ Պրագիլի Հաւաքականէն

Ֆուլթայոլի Պրագիլի հաւաքականի գլխաւոր մարզիչ Տիտէն Հեռացաւ պաշտօնէն:

Աշխարհի Բաժակի քառորդ եզրափակիչին պրագիլցիները յետադաշին 11-մեթրանոցներով պարտուեցան աշխարհի փոխախոյան Խորուաթիայէն:

Տիտէի գլխաւորութեամբ Պրագիլը յաջորդական երկրորդ առաջնութեան հասաւ քառորդ եզրափակիչ: Ան 2016 թուականէն ի վեր կը գլխաւորէ ազգային խումբը:

### ԱՄՆ Ոլիմպիական Կոմիտէն Կողմ Է «Փարիզ-2024»-ի Ռուսերու Մասնակցութեան

ԱՄՆ ոլիմպիական կոմիտէի ղեկավար Սիլվանա Լայոնս կողմ արտայայտուած է Ռուսաստանը ներկայացնող մարզիկներու՝ 2024 թուականին Փարիզի մէջ կայանալիք Ոլիմպիական խաղերու մասնակցութեանը:



Չուիցերիոյ Լոզան քաղաքի մէջ տեղի ունեցած է ոլիմպիական գագաթնաժողովը: Վերջնական հռչակագրին խօսուած է պաշտպանական միջոցներու վերանայման նախաձեռնութեան համընդհանուր աջակցութեան մասին, որ բաղկացած է ռուս եւ պելառուս մարզիկներուն թոյլ չտալու Ոլիմպիական խաղերուն մասնակցելէ: Միաժամանակ նշուած է, որ Ռուսաստանի եւ Պելառուսի դէմ պէտք է պատժամիջոցները ուժի մէջ մնան, որոնք կը ներառեն մարզիկներու ելոյթները առանց ազգային դրօշի եւ օրհներգի:

«Գուցէ ցաւալի է խոստովանիլ, բայց ռուսերու բացառումը Ոլիմպիական խաղերէն մեզ հետ կը մղէ, անոնց վերադարձը իսկապէս կարեւոր է (ոլիմպիական) շարժման համար», - Լայոնսի խօսքերը կը մէջբերէ The Wall Street Journal-ը: